

Պրոֆ. Ա. ՅԵՐՅԵՐՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԿՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX — XX դ. դ.

(Սղագրված դասախոսություններ)  
ձեռագրի իրավագրով

ՊՐԱԿ VI

I.

Շուշանիկ Կուրղինյանը հռչակվեց 1907 թվ. յերբ լույս ընծայեց իր «Արշալույսի շողանքներ» բանաստեղծութիւնների ժողովածուն: Դրանից առաջ նա գրում է «Զարագ» շաբաթաթերթում 1899 թվականներին տպել տպեց իր «Վերջալույսի վառ շողերով» անդրանիկ վրտանավորը:

Շուշանիկ Կուրղինյանը ծնվել է Ալեքսանդրապոլում/Հենրևակա-նում/ 1876 թվ. արհեստավորի ընտանիքում: Իր նախնական կրթու-թյունը ստացել է հայրենիքում, սկսել է քաղաքում և քաղաքի դուրս, անպա-պետական գաղտնի-պրոգրիմնալիստում: Այնուհետև նա շարունակել է կրթությունը ինքնակրթութան և բավականաչափ չարգայում է կարողա-յել ճեղք բերել: Նա իր ժամանակի կրթված և աշխատող կանանցիկ-տեղն էր:

Շուշանիկ Կուրղինյանը 27 տարեկան հասակից թողնում է իր ծննդավայրը և տեղափոխվում հարավային Ռուսաստան՝ Ռուստով: Այդ տեղափոխութունը վճռական նշանակություն ունեցավ նրա աշխարհայացքի կազմակերպման և գրական գործունեության համար: 3 երկու պատճառ մեծ դեր կատարեցին:

Սախ աճրող Ռուսաստանում ծայր էր առել դժգոհության գոյ-վերը ցարիզմի և բուրժուալիայի դեմ, թե բանվորության և թե գյուղա-յի բնակչության կողմից: Սախապատրաստվում էր 1905 թվ. հեղափոխու-թյունը և այդին ոգի մեջ պայտվում էր գալիք ընդ վլադսն նախակարապետը- գործադուլային շարժումը: Իրա հետ միասին հատկա-պես 1901-1904 թվերին հյուսիսային Ռուսաստանում ծախսվել էին նաև ագրարային շարժումներ, վորոնք մասն կերպ զգացնել էին տալիս մոտալուտ հասարակական յերկրաշարժը: Հնչում է բուր-ժուադեմոկրատիական հեղափոխության լույսունգը- ինքնակալության և կալվածատիրության վերացում:

Բուրժուա-դեմոկրատական էր այդ հեղափոխությունը վորովհե-

26996 25361

III 5603 A



տեղ դու հիշատականում կապիտալիստի դեմ չիր ուղղված, այլ ուղղ-  
ված էր կապիտալիստի դեմ ծառայող խոշորոտների դեմ: Դեռ արեւմտեան  
մուժուկից գիտենք բուրժուա-դեմոկրատական, հիտակայես և սպաս-  
յին պետութիւնների կազմելու դարաշրջանը սրւմտյան Զեվրոպա-  
յում 1789. 1871 թ.թ են, իսկ արեւելյան Զեվրոպայում: /Ռուսաստանում,  
Բուլղարիայում/ և Ասիայում: /Պարսկաստանում, Եւրասիայում,  
Չինաստանում/ սկսվում է 1905 թ.:

Մենք արդեն խոսել ենք լինիս հոգիվածի մասին, փորը իս  
գրել է Տոլստոյի ստեղծագործութեան առթիւ: Այդտեղ լինիս  
1905 թ.ի հեղափոխութեան մասին գրուած, 1905 թ.ի արեւել-  
յան անշարժութեան վերջն է և տոլստոյականութեան պատմական  
վախճանը: Հասկանալի չէ, փոր տոլստոյականութեան վախճանը  
պետք է բերեր բոլոր ռուս հեղափոխութեաններին պղտակ եւ  
դիւստոյ գյուղացիութեան հողի համար կախը լուծելու լինիս  
յան ուղին: փորը պետք է հեղաշրջեր հասարակական հարաբե-  
րութիւնները հոգուս բանվորա-գյուղացիական մեծամասնու-  
թեան: Ընկեր Ստալինի կարծիքով արեւմտյան Զեվրոպայում,  
հատկապէս Գրանտայում 1848 և 1871 թ.ի հեղափոխութեանները  
լուծվել են փորը հոգուս բանվորութեան, փորով հետեւ գյուղա-  
կան մասսաները բուրժուաչիայի ռեյերվն են հանդիսացել:  
Զեվ յերկրորդ: Ռուստով քաղաքը առանձնապէս հեղափոխու-  
թեան ոգիներուց մեկն էր. այդտեղ կար գիտակից բանվորու-  
թեան մի հոծ մասսա, փորը մեծ մասնակցութեան էր ցույց  
տալիս հարազատին Ռուստայի խմորումներին: Պրոլետարիատը  
այդտեղ մեծ թափով առաջ էր գնում, փորով հետեւ արդեն  
սկսվել էր հեղափոխութեան դարաշրջանը: յերթ մի տարում ա-  
վելի գործ էր կատարվում, քան իւրաքանչեւ տարիների տասնա-  
յակների ընթացքում, կամ ինչպէս ցայտուն վերաբով լինիս  
է ասում: Զեղափոխութեան մասնակց պրոլետարիատը հարյուր

ուսուցաւ այժեի ուժ է ցուց տալիս, քան նախքան հեղափոխութիւնը - այսինքն սովորական ժամանակը ։

Սուշանիկ Կուրդիւնյանն ընկնելով այդ քաղաքը, կամայ-կամայ աչքերը բաց է անում և աշխատանքի ու կապիտալի կռիւնների դրվակները ուսումնասիրում կենդանի կյանքում, բանվորական առօրյա պայքարի պրակտիկայի հիման վրա: Մրա մեջ բեկում է առաջ գալիս և արհեստավորական քաղաքում մեծուպաժ, տներտերից և պետական դպրոցում ուսում առած մի հայ կին համակրանքով է լցվում դեպի բանվորական շարժումը և իր քնարը նվիրում է հեղափոխութեան նպատակներին:

Սուշանիկ Կուրդիւնյանի վրա շատ ուժեղ տպավորութիւն է գործում՝ դեկաբրիստներից, նարոգնիկներից հետո Ռուսաստանի հեղափոխութեան ղեկն իր ձեռքն առած նոր ուժը - պրոլետարիատը, վորը նախապատրաստվում էր վճռական հարձակման, հետևելով Մարքսի այն ցուցմանը, թէ «Սեպտամբուրյուներ արվեստ է՝ վորի հիմնական որոնքն է խիզախորեն հարձակումը:

Ինչ բանի, է հետապնդում այս խիզախորեն հարձակումը իր պատասխանը տվել է լենինը 4րելով՝ «Սեմեն մի հեղափոխութեան գիտական և գործնական վորոշումը՝ իշխանութիւնը մի ձեռքից մյուսին անց ուժն է: Հոգուտ բանվորա-գյուղացիական մեծամասնութեան, նվաճելով իշխանութիւնը՝ լենինը ցանկանում է լուծել հեղափոխութեան առաջ դրված հարցերը լայնութեամբ և խորութեամբ:

Վորոնք են այդ հարցերը, - մաքրել հասարակութիւնը միջ-նազարից, հատկապես հետևյալ կոնկրետ բնադապառներում, - միայնութեան և դասերի վերացում, հողային հարցի արմատական լուծում, կնոջ և ազգութիւնների վիճակի բարեփոխում: Իհարկէ, այդ բոլոր խնդիրները վերջնականապես չեն կարող լուծել բոլոր իրա-գեմոկրատական հեղափոխութիւնը: Լինս բոլոր խնդիրները

հիւնուկն լուծեց հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը:  
Ինչպես ասացինք, Շուշանի Կուրդիյանն իր բանաստեղծություն-  
ների ժողովածուն հրատարակեց 1907 թվին, այսինքն հեղափոխության ար-  
քի գրեթե վայրենի, մոռնաին, բայց մոտալուտ ռեալիստ դեռ համառո-  
րած շեր և բայաստեղծու հու մոտ տիրուած հեղափոխական լավատե-  
սություն: Մեր գրականության և հասարակության մոտ ինչ ընդունելու-  
թյուն գտավ Շուշանի Կուրդիյանի բանաստեղծությունների ժող-  
վածուն:

Շուշանի Կուրդիյանն անսրջապես դարձավ դարրոցական հե-  
ղինակ: Սա արդեն ցույց է տալիս, վոր նրան վիճակեց սկսնակների  
նակների համար շատ հազվագյուտ մի բախտ: 1905 թվին հեղափո-  
խության ազդեցությամբ, Շուշանի Կուրդիյանի մի քանի վտա-  
նավորները իրենց դասագրքերի մեջ զետեղեցին նաև այնպիսի ման-  
կավարժներ, դասագիրք կազմողներ, վորոնք շատ հեռու էին կան-  
նած հեղափոխության նպատակներից: Այդ խնամատով շատ հետա-  
քրքրական և Գրիգոր Վանյայանի վերաբերմունքը նոր հանդես  
յեկող բանաստեղծու հու նկատմամբ: Գրիգոր Վանյայանն իրօր  
հեղինակներ քրեստոմատիայի մեջ զետեղում է Կուրդիյանի վ-  
տանավորներից մեկը՝ «Ջերոսի շիրիմ» վերնագրով:

Ինչով է այս վոտանավորը գրավել դասագիրք կազմողի  
ուշադրությունը: Նախ սա հիշեցնում է Մկրտիչ Պեշիկթաշա-  
նի «Թաղումն քաջորդույն» բանաստեղծութունը: Զերհորդ՝ բառ-  
պաշարի մեջ նկատվում է կրոնական վորոշ տերմինոլոգիա և յե-  
րորդ՝ հերոսի կռիվը և դրա նպատակը դրված է վանյայանի հա-  
մար ընդունելի ձևով: Ջերոսը մեռել է ամենքի համար:

«Վոչ խաշ մահարձան, անշուք հողակույտ  
Ամայի դաշտում լուռ, առանձնացած  
Ընկած է անփույթ:  
Աստղերը կանթել, ցուլով հրավառ

Միտին լույս տալիս, բույսը բուրմունքով  
խնկարկում բուրվառ:

Քատիս թեզերով գոգում ե, գողում:

Ու մահաւարտու ծայնով վշտացած  
վողորմեա ասում:

Վըլ խաշ, մահարձան, կյանքի / փաշը նա,

Այնպես աղվեհեր, ասենք "համար տարազ Գողորմա":

Այստեղ ինչն է հիշեցնում Պեշիկթաշլյանին: 'Սախ' բնության  
ներկայությունը հերոսի հուղարկավորութեան ժամանակ և յերկրորդ  
կրօնախոս եկեղեցան: Չ'մոռանանք, Վոր Շուշանիկ Կուրդիյանի մտ  
վոտան կրում է «Մի հոգն հանգիստ» շատ բնորոշ վերնագիրը: Պե-  
շիկթա մտտ՝ յերբ մարտիկի դին հողն են իջեցնում-

«Մնյ մալ քատիս հանկարծ փշեց ցրտաշունչ,  
լուսնի շողերը յեկազ գոցեց սթին ամպ  
Ու մեր սարերը զերթ ուրվականք անմուռնչ,  
Սեզ վըլ-խնին տնկած դիտին ապշութեամբ:

Այնժամ ցուրտ-ցուրտ հող լեցուցինք իրվրան,

Խաշ մը դրինք, ինչպես իր մոր պատվեր յետ.

Վըլ այլ շքեղ արձանագիր, վըլ տապան

Չինքը սենակ թողուցինք յուր փառքին հետ":

Այս ր փանայանից հետո Շուշանիկ Կուրդիյանին տեղ են տա-  
լուս րազանութեան քրեստոմատիայի մեջ Հովհաննես Թուման-  
յանը և Չապարոս Սողայանը, վորոնք տպում են նրա լափառյն  
յերգերից մի քանիսը և իրենց ընկեր վրթանես Փափայյանի բե-  
քանով գոգում և սկսնակ բանաստեղծուհուն: Հետագրքրական է  
նկատել, Վոր այդ դեմոկրատական հեղինակներին Շուշանիկ Կու-  
րդիյանի ստեղծագործութեան մեջ գրավում է գաղափարների հետ  
ժամանակ նա և վոտանավորների յերաճչտականությունը, նրանք  
տպարքը էն իրենց «Հայ գրողներ»-ի առաջին հատորում բնա-

ստեղծուհու «Տրտունը» վոտանավորը, վորը մեր գրականության յե-  
րաժշտական յերգերից մեկն է: Ինչպես ասացինք, դասագիրք կազ-  
մողների ուշադրությունը գրավել է նաև նոր բանաստեղծուհու տաղ-  
չափական արվեստը: Յեւ իսկապես Շուշանիկ Կուրղինյանը այն  
բանաստեղծների թիւն է պատկանում, վորոնց ավելի շատ պետք է լսել,  
քան կարդալ: Գրականության քննադատության մեջ յեղել է հոսանք,  
վորի ներկայացուցիչն է Արմերը: Աս պահանջում է լիրիկայի մա-  
սին գաղափար կազմել և քննադատել վոր թէ կարդալով, այլ լսե-  
լով, վոր թէ աչքով, այլ ականջով: Աս նույնիսկ հեռակալ տերթնն  
է ստեղծել *oikonomologie*:

Դասագիրք կազմողներից հետո Շուշանիկ Կուրղինյանի գրա-  
կան բեմերը վողջունել են նաև քննադատները և շատ կարևոր է  
դիտել, վոր Շուշանիկ Կուրղինյանի առաջին քննադատը յեղել է  
Ավետիք Իսահակյանը, վորը մեծ համակրանքով է խոսել նոր բա-  
նաստեղծուհու մասին և նրա յերգերը առաջարկել է ընթերցող-  
ների ուշադրությանը:

Ինչն եր գրավում Ավետիք Իսահակյանին Շուշանիկ Կուր-  
ղինյանի ստեղծագործության մեջ: Ամենայն առաջ բանաստեղծու-  
հու գթասեր, կարեկից վերաբերմունքը դեպք ենչվածները, գեպի  
աղբատները, բախտից հալածվածները: Ավետիք Իսահակյանը գրում  
է «Մենք աշխարհի խորթ տղերքն ենք» այդ նույն արտահայտու-  
նը փոքր ինչ այլափոխած ասում է նաև Շուշանիկ Կուրղին-  
յանն իր «Բանվորներ» վոտանավորի մեջ «Մենք խորթ պավակներ  
իսկ վայելչության ըսբիչ ներ»:

Յերկրորդ առանձնա հատկությունը, վորը գրավում է Ավե-  
տիք Իսահակյանի ուշադրությունը, սա այն է, վոր Շուշանիկ  
Կուրղինյանի ստեղծագործության մեջ վորոշ շափով գրված է վա-  
թանի սերը - Աղաքյապի կարոտը: Շուշանիկ Կուրղինյանը յերկար  
տարիներ պանդխտության մեջ լինելով, մեծ սիրով է խոսում

և մեծ կարողով հիշում իր ծննդավայրը:

Մենք գիտենք, Վոր Ավետիք իսահակյանն էլ յերկար տարիներ հայրենիքից հեռու վրձելով՝ միշտ կարող է պահպանել գեղարք իր հայրենի բնությունը: Իսահակյանը գրում է՝ «իմ սիրտը այնտեղ է, ուր բարձրագույն լեռներն են իշխում այն յերկրի վրա»: Այդ բարձրագույն լեռներից Մուշանիկ Կուրդինյանը հիշում է հատկապես Աբաղյալը և ուտարության մեջ շատ մորմուքվելով ասում է, Վոր շկա Աբաղյալը:

Յորրորդ առանձնա հատկությունը, Վոր գրավել է Ավետիք իսահակյանի ուշագրությունը, դա Մուշանիկ Կուրդինյանի ստեղծագործությունների մեջ յեղած մոզոպրոպայնությունն է: Մուշանիկ Կուրդինյանը իր մի շարք գործերի մեջ վոչ միայն բարբառի տարրեր է մտցնում, վոչ միայն մոզոպրոպական ստեղծագործության պոետիկա յե բանեցնում, այլև մի շարք հասարակական յերևույթների նայում է մոզոպրոպի աչքով: Յերկու բանաստեղծներն էլ, թե Մուշանիկ Կուրդինյանը և թե Ավետիք իսահակյանն ոգտվում են բարբառներից և այս հանգամանքը հատկապես շեշտում է Ավետիք իսահակյանը, համարելով Մուշանիկ Կուրդինյանի լեզուն կենսունակ, վորովհետև դրա մեջ մոզոպրոպական բառն ու բանն է արտահայտված: Մուշանիկ Կուրդինյանը գործ է ածում «Մուշան, կարմիր լալա», դարդու-աչուն, իմ սիրտ, իմ բալա արտահայտությունները, վորոնք այնքան հարապատ և մտերիմ են թվում Ավետիք իսահակյանին: Յեվ վերջապես, չորրորդ առանձնա հատկությունը, Վոր Ավետիք իսահակյանին գրավում է, Մուշանիկ Կուրդինյանի մի շարք յերգերի յերաբխաական-տաղաչափական արվեստն է: Մուշանիկ Կուրդինյանի հայտնի «Տրտուն» վոտանավորը գրված է Ավետիք իսահակյանի «իմ հոգին տարագիր մի թռչուն» վոտանավորի շափով:

Բայց դասագիրք կազմողներից և բնագրողներից, Շուշանիկ Կուրդին-  
յանը գրավել է նաև գրականության պատմագիրների ուշադրությունը:  
Նրան իր գրականության պատմության մեջ է մույրել վերաներ ֆախապա-  
նը: Ինչ առավելություն է տեսնում Շուշանիկ Կուրդինյանի ստեղծա-  
գործության մեջ Վ. Փափապյանը:

Ամենից առաջ ֆախապյանի ուշադրությունը հրավում է այն հան-  
գաժանքը, վոր նոր բանաստեղծը կին է և այդ-հան իմաստը շեշ-  
տով գրում է: Յերրորդ, վոր Շուշանիկ Կուրդինյանը համաշխար-  
հային թախծին տվել է հայրենասիրական շեշտ: Փափապյանը կրան  
անվանում է «Եվեր վաթան»-ի գալի յերգիլ:

Յերրորդ, ֆախապյանը կրան գուտ բանկարգության, պրոլետարի-  
ատի դասակարգության յերգիլ չի համարում, այլ ընդհանուր առմամբ  
պատմագրության բանաստեղծ է կրան ճանաչում:

Գորրորդ «ֆախապյանը շատ է գովում Շուշանիկ Կուրդին-  
յանի քերթողական բարձր արվեստը, նա առանձնապես շեշտում է  
բանաստեղծի յերգերի բարձր, աննման, ճիշտաշտակականությունը:

Վ. Փափապյանը բերում է յերաժշտական մի յերկու հատված  
և պնդում, վոր հայ գրականության մեջ դրանց նմանը դեռ չի յե-  
րևացել, որինսկ, վերև հիշված «Տրուտնը» վրտանակորը:

Սիս մրսուռ միշտ անլուռ  
Կայ յագին քո հոգին ձանձրացրու՛ր  
Վոր անդարդ ու հանդարտ յերգիլով  
Հեռացար քեզ համար առանց ցավ՝:  
Իսկ յես հեց փրկարգեղ ձովի մեջ  
Պիտ, վրդամ, ու գողամ միջև լույս  
Միջ ձագի նոր այգի լուսհեռ  
Վառ արփին, սեմ արփին արշաղայ

Վրտանակորի յերաժշտականությունը բայց, ֆախապյանի ուշա-

դրությունը պրավում է նաև նոր բանաստեղծուհու լեզուն, այն հա-  
րապատ հայերենը, չոր յուր պարզությամբ հիշեցնում է Ղազարու  
Լիզայանի լեզուն և վերջապես հինգերորդ, Փափայյանը պնդում  
է, չոր նոր բանաստեղծուհին շատ մեծ հույսեր տվող մի սկսնակ է:

Շուշանիկ Կուրդինյանի մասին մեծ համակրանքով է խոսում  
նաև բնիկ Կիրպուտինը, վորը գրում է հետևյալը՝ «Պրոլետարական  
պայքարը մղված սոցիալիզմի համար դառնում է բանաստեղծու-  
հի Շուշանիկ Կուրդինյանի ստեղծագործության բովանդակու-  
թյունը: Կիրպուտինը չի կատարել վալերի Բրյուսովի սխալը.  
նա Չակոբ Չակոբյանի ստեղծագործությունը համարում է  
այն կամուրջը, վորը միացնում է նախահեղափոխական հայ  
գրականության լավագույն տրադիցիաները խորհրդային պո-  
ետիայի հետ: Այդ իմաստով, Շուշանիկ Կուրդինյանը հան-  
դիսանում է Չակոբ Չակոբյանի բաց արած ճանապարհով  
գնացող մի բանաստեղծ և վոչ լին ընդհանուր, ինչպես պրո-  
գն է վալերի Բրյուսովը իր «Պոետիա Լիթենի» թարգման-  
չական ժողովածույի մեջ: Լիդտեղ Բրյուսովը Շուշանիկ Կուր-  
դինյանի մասին գրում է հետևյալը՝ «Բանաստեղծու հի Շուշա-  
նիկ Կուրդինյանը, Ավետիֆ Իսահակյանին վոգևորող բանա-  
ստեղծություններից հետո, տվել է ուղղափառ Մարքսիզմի  
վոգույ՝ իդեական յերգեր: Այդ իմաստով նա հայ գրականու-  
թյան մեջ բնորոշ յերևույթ է, նրա բանաստեղծությունների  
մեջ վոգի կա:

Վալերի Բրյուսովի այս կարծիքը ամբողջությամբ ճիշ չէ: Իհար-  
կե կասկածից դուրս է, վոր Շուշանիկ Կուրդինյանի բանաստեղ-  
ծությունները մեծ ընդունելություն գտան հենց այն պատճառով,  
վոր նա բերում էր վորոշ գրական և իդեական նորություններ:  
Ճիշտ է նաև, վոր բանաստեղծուհու վոտանավորները վոչ միայն  
վոգևորության արդյունք են, այլև վոգեվորում են ընթերցողին, վո-

րով հետեւի հեղինակը տաղանք ուներ: Բայց այս բոլորի հետ միասին  
բժշկար Ե Շուշանից Կուրդիսյանին ուղղափառ մարքսիզմի ներկա-  
յայտութիւն համարել. նա սուկ հեղափոխութեան ուղեկից է և Հակոբ  
Հակոբջանի հետ համեմատած, հետեւողական մարքսիստական աշխարհայե-  
հայացք չուներ: Դրան ապացույց այն, Վոր Շուշանից Կուրդիսյա-  
նը պայքարի և ըմբոստացման յերգերի հետ միասին, ունի նաև  
բարեգործութիւն. քարոզող յերգեր. պրոլետարական յերգերի կող-  
քին, ունի նաև Վորոշ ազգայնական մտաւիճեր:

Շուշանից Կուրդիսյանի ստեղծագործութեան առաջին շրջանը  
իր մեջ ամփոփուած է քաղաքային աշխատավորական խայտերի  
ձանր վիճակի պատկերացումը: Նա ստեղծագործական վերելք է  
ապրել 1905 թվի հեղափոխութեան ժամանակ: Ինձեպիսայի տարի-  
ներին նա շատ գործերով հանդես չեկավ, բայց վերջ շտեպ  
վորոշ հռետտետութիւնից: Հոկտեմբերյան հեղափոխութեանից հե-  
տո, ինչպես և 1905 թվականի հեղափոխութեան ժամանակ, նա  
կրկին ստեղծագործական վերելք ապրեց և գովերգեց սոցիալիստա-  
կան հեղաշրջումը:

1921 թվին, Հայաստանի խորհրդայնացումից հետո, Շուշա-  
նից Կուրդիսյանը վերադարձավ հայրենիք և գրեց մի քանի վա-  
տանավորներ, վորոնց մեջ նա յերգեց խորհրդային նոր հասարակա-  
րաբը վոգեվորված կերպով կոչելով պրոլետարիատին, վոր նա  
պինդ պահի նվաճած ապատութիւնը և սոցիալիզմը: Այս վտա-  
նավորներից պետք է հիշատակեմք հետեւյալ յերգումը, նորը  
կոչիր " Ե. Հեյ, ինձ լսեք": Շուշանից Կուրդիսյանը շատ բան  
չի կարողացել գրել, վորով հետև նա տառապում էր ձանր հի-  
վանդութեամբ, վորը նրան գերեզման իջեցրեց 1927 թվին: Խոր-  
հրդային հասարակայնութիւնը նրան թաղեց հանդիսավորա-  
բայաբ և մամուլը կրկին անգամ վեր հանեց Շուշանից Կուր-  
դիսյանի ծառայութիւնները բանվոր դասակարգի համար, շեշ-

տեց այն հանգամանքը, վոր իր լավագոյն գործերի մեջ: Շուշանիկ Կուրղինյանը բանվոր դասակարգի ուղեկիցն է յեղել, նա ստրկացրել է քննադատել է բուրժուապիային, յեկեղեցին և հոգևորականութեանը: Այդ իդեալան արժեքի հետ միասին, նրա ստեղծագործութեանը աչքի յե ընկնուա նաև խորը հուպականութեամբ ձևերի բազմապատկանութեամբ, լեզուի նոխութեամբ և ակնբախ պատկերավորութեամբ: Նրա լավագոյն գործերի հիմքում դրված է ժողովրդայնութիւնը, իսկ կատարման և կառուցման սկզբունքը բոլորում է պարզութիւնն և անմիջականութիւնն: Բանվորական մասսաները, խորհրդային հասարակայնութիւնը և քննադատութիւնը նշեցին Շուշանիկ Կուրղինյանի ստեղծագործութեան մեջ մի շարք լավագոյն վտանավորներ, վորոնք և հաճախակի տպագրւում են մեր խորհրդային դասագրքերում:

Վորոնք են այդ վտանավորները՝ «Ապաստանի զողանքներ», «Յետ տար քո խաչը», «Յանգևորե՛ք ջահներ», «Բանվորներ, «Այնտեղ գնացե՛ք», «Գեղջիւ հու մորումք», «Արծալի սերը», «Յես ըմբոստացա՞», «Գութանի յերգը», «Ծաղիկ ձախող աղջիկը», «Բանվորու հին», «Արեւուս» և «Աստղակիրը»:

## II.

Այժմ անցնենք Շուշանիկ Կուրղինյանի հասարակական և քաղաքական աշխարհայայլի պարզաբանման խնդրին, ավելի վորոշակի՝ նրա ստեղծագործութեան սոցիալական արժեքին: Պետք է նկատել, վոր բանաստեղծու հին, ի հարկէ, ունեցել է վարդ նվույուցիա: Նրա յերգերն սկսւում կրել են վորոշ բարոյախոսափան յերանգավորում: Բանվորութիւնը բանաստեղծու համար համար է պալիս, վորպէս սոսկ նշված է տարապող մի խաղ, վորի հանդեպ կա զգում է գեթ կարեկցութիւն:

«Բարձիւր ուսերիս քո բեւը կսկիծ

Վողբերն ու նիչերը անհուն տանջանքիդ

վհատ կեանք և սերդ անքի՛ծ  
բոլոր ցավերը և խաշը կյանքիդ՝

Կուրդիսյանը 1905 թվին ապրեց վերեջի և պատմութեան թեմ  
յեւած «Նոր ուժը» նկատելով դառնում է նրա գովերգողը. այդ բա-  
նը չի խուսափում ցարական կառավարութեան աչքից: Համաշխարհա-  
յին պատերազմի ժամանակ 1915 թվին, հայ բանաստեղծութեան մասին  
ռուսերեն լեզվով հրատարակված մի բրոշյուրում, վորը գրում է Հով  
հաննես Գնունին «Момыбы армянского поэзии» խորագրով, հեղի-  
նակը խոստովանում է, վոր իրենից անկախ պատճառով մանրամասն  
չի կարող խոսել Շուշանիկ Կուրդիսյանի մասին: Այդ ակնարկը  
ցույց է տալիս, վոր ցարական ցենզուրան հետապնդել է Շու-  
շանիկ Կուրդիսյանին «Արշալույսի ղողանջներ» բանաստեղծու-  
թեան ժողովածույի համար:

Այժմ անցնենք այդ ժողովածույի վերլուծմանը: Ամենից ա-  
ռաջ շատ բնորոշ է վերնագիրը: Ինչ են նշանակում «Արշա-  
լույս» և «Ղողանջ<sup>ներ</sup>» բառերը: «Արշալույս» ասելով Կուրդիսյանը  
հասկանում է ազատութեան գաղափարը, ազատութեուն ցարա-  
կան ռեժիմից, իսկ «Ղողանջներ» ասելով, նա հասկանում է այդ  
ազատութեան հասնելու համար մղվող կռիւը, կամ ավելի շատ  
կռվի կանչը: Այդպիսի այլաբանական վերնագիր բանաստեղծուհին  
դնում է ցարական ցենզուրայի պայմանները նկատի առնելով:

Ըննիւր իր իմպերիալիստի մասին գրած հոյակապ գրքի առա-  
ջաբանում, հին ռեժիմի ժամանակ գրող դեմոկրատական հեղինակնե-  
րի լեզուն անվանում է անիճյալ լեզու, նկատի առնելով, նախ  
ցենզուրայի ճնշման պատճառով կատարվող հարկադրված խորժա-  
բանութեունները և ապա նաև այն ակնհայտ փաստը, վոր մոյլե-  
իսկ գրելու ժամանակ հեղինակն իրեն ազատ չի զգում և ինք  
առաջուց կատարում է նախագրաբնութեուն իր գրվածքի  
նկատմամբ: Եարական գրաբննադատութեունից ավելի թերևս

հեղինակի այդ ինքնագրաբնագրաթյունը հոգեբանորեն առավել ծանր էր, քան պարական պաշտոնյաների բռնությունը: Այդ բռնությունը պենպուտական ավազակությունն է անվանել ուրևս նշանավոր վիպասան Պիսեմսկին: Ենկրատովը, «Հայնեյից» /уз зейке/ կեղծվերնագիրը դնելով՝ գրել է հետևյալ ինքնուրույն տողերը:

Душно! без счастья Волю

Ночь бесконечно глуха

Буря бы гремела, что лу?

Այս փոթորիկը պայթեց 1905 թվին և վոգևորեց, խանդավառեց Մուշանիկ Կուրդիևյանին, վորը տվեց հայ գրականությանը մի շարք անմոռաց յերգեր, վորոնց սեղ դուք պզուս եք նրա ապրած դարաշրջանի կենդանի շունչը:

Մուշանիկ Կուրդիևյանն իր այդ յերգերի սեղ խուսափել է այն պակասությունից, թերու թյունից, վորն իր ժամանակ նկատել և դատափետել է Բելինսկին վորոշ բանաստեղծների գործերը անվանելով «զել-հային բանաստեղծություններ», այսինքն շոր և հուետորական:

Մուշանիկ Կուրդիևյանն իր սրտի ջերմությամբ, տաքությամբ յերգուս է այն վեռական պայքարը, վորով դրսեվորվել է հեղափոխությունը: Մի քանի որինակներ բերենք ցույց տալու համար, թե Մուշանիկ Կուրդիևյանը ինչ է տեսնում իր դարաշրջանում և այս տեսածը ինչպես է պատկերացվել:

«Հառաջ անվեհեր» բանաստեղծության սեղ՝ հետևելով Միֆայել Նալբանդյանի կողին, բանաստեղծուհին առաջարկում է կուլի սեղ հաշվի շառնել մահվան առկայությունը: Մուշանիկ Կուրդիևյանը գրում է «Մահը անմահ է արգար կուլի սեղ»: Կուլի յերգ յերգող բանաստեղծների մասին Գյոթեն մի միտք է արտահայտել, վորը սենք հիմա պետք է գնահատենք: Գյոթեն ասում է «Կուլի յերգ գրողը, պետք է կուլի դաշտում լինի և նրա բնավորության սեղ պետք է լինի ուպսականություն»: Այս կար-

Յիքը բառացի իմաստով ճիշտ չէ, ճիշտ է, սակայն, այնքի ընդարձակ  
իմաստով, այսինքն, վոր յերգիչը պետք է ունենա ստեղծագործա-  
կան յերեվակայութիւն և բուռն անկեղծութիւն, նա պետք է  
կարողանա իր տաղանդի ուժով ներթափանցել կազմողների հո-  
գեթանութեան մեջ և անկեղծութեամբ արտահայտի իր մտածածն  
ու գգայածը: Մուշանիկ Կուրդիւնյանը կոչ էր անուա ինչի դեմ կը  
վել: Նա կոչ էր անուա կռվել, ինչպես ինքն է ստուա՝ « Բիրտ կարգե-  
րի դեմ », նա բողոքուա էր « Սեպ շղթաներ »-ի դեմ: Նա իր բանաստեղ-  
ծութեաններով հաստատուա էր ընդելի կարծիքը զարական Ռու-  
սաստանի մասին « Դա Ժողովուրդների բանտ է »: Մուշանիկ Կուր-  
դիւնյանի յերգերի մեջ առաջ է գալիս մի սկզբունքային խնդիր:

Վորն է այդ սկզբունքային խնդիրը, նա կոչ է անուա զարկ-  
մի դեմ կռվել, բայց ո՞վ պետք է ղեկավարի այդ կռիվը, վորն  
է այն առաջատար ուժը, վորը պետք է ճանապարհ բաց անի  
իրբէ կռվող պիոներ: Ուշադրութեան արժանի յէ այն հանգաման-  
քը, վոր Մուշանիկ Կուրդիւնյանը հեղափոխութեան մեջ առաջա-  
տար ուժի է համարուա բանվորութեանը և վոր թէ բուրժուապիային,  
ինչպես պնդուա էին մենշեվիկները: Յերևի այդ հանգամանքը  
նկատի առնելով է, վոր վալերի Բրյուսովը, Մուշանիկ Կուրդիւ-  
նյանին անվանել է ուղղափառ մարտիտ: Այդ կետուա թերևս  
նա վորոշ հիսք ունեցել է: Մուշանիկ Կուրդիւնյանը գրել  
« Բանվորներ » վերնագրով մի նշանավոր վառանավոր: Այդ վո-  
տանավորի մեջ նա զույգ է տալիս, վոր բանվորները չնայած զա-  
րական բանտերին, ախտրին, չնայած այն հանգամանքին, վոր  
այս բանտերն ու ախտրը նրանց անբաժան ընկերն է, բայց  
և այնպէս այդ բանվորութեանը գնուա է իր կրթով փշրելու-  
արկութեան շղթաները: Մի գիծ, վորով Մուշանիկ Կուրդիւնյանի  
պոեզիան մտածուա է Հակոբ Հակոբյանի պոեզիային, դա այն է  
վոր Մուշանիկ Կուրդիւնյանը ևս չի լալիս, նրա մեջ չկա վորե՛տ

հոռետեսութիւն. կռփի մեջ ընկածին նա ներբողում է, բայց ցա-  
վերի ճիշեր չի արձակում, նա սյարգւսպես ասում է թէ «Յե-  
լայ չ'պետք է լինես, թող լա դուշմանը»:

«Չա՛, մենք ենք գալիս.

Դարավոր վշտի, պրկանքի բովից,

Չալածանքների, գորշ ստրկութեան

Մոռացված խափից -

Կրճճով փշրելու փառքը տիրողի.

Գահը բռնութեան - ստրկի շղթան,

Մոր ուղի հարթել մեր նմաններին,

Արժանի կոչման - հալածարութեան,

Այդպէս ենք գալիս:.

Ի պատիւ Շուշանիկ Կուրդինյանի, պետք է ասել, վոր նա  
զգում է այդ կռփի ինտերնացիոնալ բնույթը: Այդ միտքը նա ար-  
տահայտել է իր գրած «Միջազգային յերգը» վոտանավորի մեջ:  
Այդտեղ նա այն միտքն է արտահայտում, վոր ահեղ կռփի ժա-  
մանակ պետք է բոլորը միանան, այդ բոլորի մեջ նաև գյուղա-  
յիութիւնը:

Շատ հետաքրքրական է, թէ ինչպէս է ներկայացնում Շու-  
շանիկ Կուրդինյանը իր ստեղծագործութիւնների մեջ գյուղացու-  
վիճակը պարական ուճիսի որոք: Մա ցույց է տալիս, վոր գյու-  
ղացիութիւնը վոչ միայն հուշի պակասութիւնից է տուժում,  
այլև պարական ուճիսի քաղաքական կարգերից: Ընդ հանուր  
առումով նրա ստեղծագործութիւնների մեջ գյուղացիութիւ-  
նը հիւնդեռ է գալիս իր վիճակի ծանր նկարագրութեամբ:  
Գյուղացիութիւնը նրա գործերի մեջ այնպես ակտիւ է հան-  
դուզն չի հանդես գալիս, ինչպէս բանվորութիւնը: Մրա մտտ  
գյուղացիութիւնը կոչվում է «խեղճ գեղջուկներ», վորոնք իրենց

Կճղաձ արտերը արցունքով են թրջում:

» շեյ... վեր կայ, գեղջուկ, վեր կայե՛ք, յեզներ,  
Միթե չեք զգում-

Արտերը վաղուս... սրմի կարոտից,

Հախս են սգում:

Լի... ինչ եմ տեսնում... գեղջուկն է գալիս

Գլխակոր, արտում,

Կիսամերկ, գծում, թախծոտ հայացքով,

ինչ վոր փնթիւնթում:"

Գյուղացիութեան վիճակի այսպիսի նկարագրութեանը մասամբ  
միայն ճիշտ է. վորովհետև գյուղացիութեանը 1905 թվի հեղափո-  
խութեանը մասնակցող ակտիվ ուժերից են: Շուշանիկ Կուրդին-  
յանը այն միտքն է հայտնում, վոր պետք է բանվորու-  
թեանը այդ թշվառ գյուղացիութեանը ղեկավարի: Վերջին միտ-  
քը միանգամայն ճիշտ է:

» Այնտեղ, ուր վոր խեղճ գեղջուկը անհայ,

Տգետ, խավարի մեջ է խարխալում.

Ցերաշտից, գրտից, անսերմ մնացած.

Կճղաձ արտերն արցունքով թրջում:"

Բանաստեղծու հին բանվորներին առաջարկում է այդ խեղճ.

Թշվառ գյուղացիութեան մոտ տանել «Սոցիալիզմի լույսը»

» Բանվորի յերգ"-ը վոտանավորի մեջ բանաստեղծու հին այն  
կարծիքն է, վոր սոցիալիզմի լույսը տարածելը պետք է կյանքի  
մեջ խոշոր բեկում առաջացնի, վոր կյանքի բիւի վրա դերերը  
պետք է փոխվեն, ով յերեկ տեր են համարվում, այսօր պետք է  
ճնշվի, իսկ ով յերեկ ստրուկ են, այսօր պետք է ղեկավարի ու եր  
ստանձնի:


Բանաստեղծու հին հավատով է վողջունում և իր առջ հավա-

տով նա սողորում ե իր ընթերցողներին: Արա յերգերի ազիտա-  
յիոն նշանակութիւնը հենց այդ յերգերի ջերմ խանդավառու-  
թիւնն է: Բանաստեղծու հին յերայ ե տեսնում, տեսնում ե,  
վոր յերկնքի վրա սի ջահ ե վառվում, այս ջահը այլաբանու-  
թիւն ե և բանաստեղծու հու մտ ապատութեան սիմվոլն ե:  
Մասի հետաքրքրական ե հեղինակի մտնեցումը դեպի ապա-  
տութեան գաղափարը: Ակզբում այս ջահը միայն իր հայրենի-  
քի վրա յե վառ պահել, բայց հանկարծ ջահը հանգչում ե  
և բանաստեղծու հին համոզվում ե, վոր ապատութիւնը բոլո-  
րի համար ե- Ռուսաստանի մեջ մտնող բոլոր ժողովուրդնե-  
րի համար, ապատութիւնը ամենքի անբախտելի ստացվածքն  
ե:

Ապատութեան կռիւ մեջ բանվորները առաջին շարքերում կանգ-  
նելով՝ պարիպի կատաղի հարվածներն ամենից առաջ նրանց ե  
բաժին ընկնում, և պարական տխրահուշակ արդարադատու-  
թիւնը բայ ե անում իր ռազմադաշտային դատարանները, ազ-  
տիվ հեղափոխական բանվորներին դատապարտում ե կամ բան-  
տերի, կամ աքսորի և կամ մեծ շափով՝ կախաղանի: Կախա-  
ղանի դատապարտված բանվորների հոգեկան ուժեղ կայու-  
թեան պատկերացումը, Մուշանիկ Կուրդիյանը տվել ե իր նշա-  
նավոր «Ջետ տար քո խաչը» վոտանավորի մեջ:

Լենինն ասել ե « Բուրժուական իր իշխանութիւնը պահում  
ե յերկու ուժի միջոցով - դահճի և տերտերի ուժով, մեկը  
ճնշում ե, իսկ մյուսը մխրթարում: Զեյ ա հա կախաղանին  
դատապարտված հեղափոխականին կամ բանվորին մոտենում  
ե տերտերը խաչը ձեռքին և ուղում ե նրան մխրթարել: Այդ  
մխրթարութեան մասին խոսել ե նաև իր ժամանակին Ֆելեյ-  
բախը, հնգնորեն նկատելով թե՛ « Կրօնը մխրթարում ե»: Այդ  
մխրթարութեան ռեալիտն բնույթը պույս ե տալիս. Ֆելեյբախը

A III  
5603



գրելով հետևյալը՝ « Ով վոր ստրուկին մխիթարում է, փոխա-  
նակ ստրկութեան դեմ ըմբոստացնելու, նա պաշտպանում է  
ստրկատերերին »:

Խաչը հեղափոխականին դեմ անելիս ինչ քարոզ է կար-  
դում հոգեվորականը, վոր նրանով կարողանա բանվորին  
հետ պահել հեղափոխութեանից: Այդ քարոզը քրիստոնե-  
ութեան քվենտեսնցիան է. « Աղաճա մեղքից » հետո աստ-  
ված դատապարտել է վողջ մարդկութեանը ծանր աշխա-  
տանքի, ուստի և յեթե քո տերը ստիպում է մի ծան աշխա-  
տել, դու յերկուսն աշխատի, վորովհետև մարդու յերջան-  
կութիւնը այստեղ չէ, այլ յերկնքում, նյութականի մեջ չէ,  
այլ հոգու անդորրութեան և հավասարակշռութեան մեջ:  
Քեզ բայի դրանից՝ յերանի աղբատներին և տնանկներին, վո-  
րոնք պետք է վայելեն մյուս աշխարհը: Պուշկինը իր  
« Գավրիլիադայի » մեջ ծաղրել է աստծու գաղափարը հե-  
տեվյալ սարկաստիկ տողերի մեջ, աստծո մասին խոսե-  
լով հեզնում է:

Всс шур забыл, не правил

ничем,

И без него все шло своим

порядком.

Շուշանիկ Կուրդինյանի վոտանավորների մեջ պայտու-  
կերպով տրված է կրոնավորների զգվելի դեմքի պատկերը:  
Խաչը. դա կեղծիքի, քսութեան գործիքն է. կեղեքիչների զեն-  
քը:

Գեվորգ Բրանդեսը ասում է, վոր կին հեղինակները  
չեն կարողանում տղամարդ պատկերացնել: Թվում է, թե այս  
կարծիքը վորոշ շափազանցութիւնն է իր մեջ պարունակում:

Տվյալ դեպքում Մուշանիկ Կուրդինյանը շատ հաջող կերպով  
տպել է կախաղան բարձրացող տղամարդու ցասման խորը  
պատկերացումը:

Բուրժուական կին հեղինակների մեջ վորոշ սուբյեկտիվի-  
տի արտահայտություն է նկատել նաև Մաքսիմ Գորկին ասե-  
լով՝ «Նրանք, այսինքն, բուրժուական կին հեղինակները, այս-  
պես են շինված, ամեն մեկը ունի մի ներքին հայելի, վորն  
արտացոլում է միայն իրենց, այդ կին հեղինակներին: Մասնք  
նայում են հայելուն և տեսնում են հայելու մեջ վոր թե  
ամբողջ կյանքը, այլ միայն իրենք իրենց և հենց այդ տե-  
սածն էլ նկարագրում են»:

Մուշանիկ Կուրդինյանը նախ բարձրացել է բուրժուա-  
կան կնոջ վորոշ մակարդակից, տեսել է ալեւին, քան թե  
տեսնում են իր սեռակիցները և յերկրորդ՝ այդ հնարավոր  
ությունը նրան տպել է ռեալիստի մեթոդը, վորի շնորհիվ  
նա ճիշտ կերպով արտացոլել է կյանքը և առանց կեղծե-  
լու տպել է կյանքի պատկերը, ևսև այդ կախաղան բարձրացող  
տղամարդու ճիշտ հոգեբանությունը:

«Յետ տար քո խաչը.

Յետ տար քո խաչը,

Գործիքն անհարմար,

Անվերջ կեղծիքի, Լպիրշ քսության,

Անմեղ զո հերի անգութ սպառման,

Վաղուց կեղծված ժանգոտ բանալին,

Կեղեքիչների զենքը քառաթև»:

Ինչպես տեսնք տեսանք Հակոբ Հակոբյանի մասին խոսելիս.  
1905 թվի հեղափոխությունը մասնակցել են նաև կանայք, վո-  
րոնք բանվորների հետ միասին, թե գործարաններում և թե  
հրապարակներում ծառայել են ցարիզի և բուրժուակալի դեմ,

տալով բազմաթիվ զոհեր, յենթարկվելով բանտի և ախորի, նույն-  
իսկ մահվան պատժ: Այդ քաղաքական խոչոր յերևույթը նկա-  
տել է նաև Շուշանիկ Կուրդիսյանը: Նրա մոտ կնոջ հարցը  
դրված է հետևյալ տեսանկյունով: Բանվորու հին իջնում է  
կռվի դաշտը և նա ձեռք է մեկնում իր ընկեր բանվորին ու  
այդ յերկուսը միանալով, իրենց կրճերը գեղ են տալիս պարի-  
սի և բուրժուազիայի հարվածներին: Այդ գաղափարը Շուշա-  
նիկ Կուրդիսյանը արտահայտել է «Մենք ել միանանք» վո-  
տանավորի մեջ:

Մենք վերելք տեսանք, վոր Շուշանիկ Կուրդիսյանը  
տալիս է գյուղացիների դժբախտ վիճակի նկարագրությունը  
և այդ նկարագրության հետ միասին բանաստեղծու հին նկա-  
տել է նաև գյուղացիության դժգոհությունը: Գյուղացիության  
դրությունը շատ ծանր էր Ռուսաստանում, վորով հետևե ճոր-  
տատերերի ձեռքին էր գտնվում քաղաքական իշխանությունը  
և իսկապես 1905 թվի հեղափոխությունից առաջ միապետու-  
թյունը վոչ այլ ինչ էր, յեթե վոչ ճորտատերերի դիկտատու-  
րա: Ընթին ասել է պարիսի մասին հետևյալը՝ «ինքնակալու-  
թյունը թեև քայլեր է անում դեպի բուրժուական միապետու-  
թյունը, բայց և այնպես մեռն է նախկին հնամենի իշխանու-  
թյունը: ճորտատերերի դիկտատուրա, վորոնց ձեռքին է իշխա-  
նության 99 տոկոսը»:

1905 թվի հեղափոխությանը հաջորդող ռեակցիայի ժամանակ  
Առաջիկանի որոք, հին նահապետական քննդալական արտոյու-  
տիվը կերպարանափոխվում է ժամանակակից բուրժուական միա-  
պետության, վորը կատաղի կերպով շարունակում է իր գաղու-  
թային քաղաքականությունը: Ծարիպի գաղութային քաղաքակու-  
նության մասին ընկեր ԱՏԱԼՈՒՆԸ գրում է հետևյալը՝ «Ծարիպը  
ճայրամասերու» դիտավորյալ կերպով նահապետական քննդալա-

կան ճնշում եր կիրառում նրա համար, վորպեսզի մասսաներին պահի տգիտութեան և ստրկութեան մեջ: Յարիզմը ճայրագապաների լավագոյն անկյունները դիտավորյալ կերպով կոլոնիզատորական տարրեր ե բնակեցնում նրա համար, վորպեսզի տեղացիներին քշի վատթարագոյն շրջանները և ստեղծի ազգային յերկպառակութիւններ. ցարիզմը ճնշում, իսկ յերբեմն պառկապետ վերացնում ե տեղական դպրոցները, թատրոնները, լուսավորական հիմնարկները նրա համար, վորպեսզի մասսաներին իսկարի մեջ պահի":

Իր „Գութանի յերգ"ի մեջ, Մուշանիկ Կուրդինյանը ցայտուն կերպով տալիս ե ցարիզմի և կալվածատիրութեան լծի տակ ճնշված գյուղացիութեան վոչ միայն ծանր վիճակը, այլև այդ նույն գյուղացիութեան դժգոհութիւնը: Բանաստեղծուհին զգալ ե տալիս, վոր բանվորութիւնը պետք ե հաղթանակի գյուղացիութեան շքավոր տարրերի հետ միանալով, այն լուսունգը, վորը գրել ե լենինը բանվորա-գյուղացիական դիկտատուրայի իմաստով, այդ լուսունգը վորոշ շափով իր ստեղծագործութիւնների մեջ տվել ե Մուշանիկ Կուրդինյանը՝ արդարացնելով նաև այն ճշմարտութիւնը, թե՛ 1905 թվի հեղափոխութիւնը և առ հասարակ հեղափոխութիւնը Ռուսաստանում պետք ե հաղթանակի, յերբ բանվորութիւնը և գյուղացիութիւնը միասնական ճակատով դուրս կգան ցարիզմի և բուրժուաչիայի դեմ: Մարքսը իր ժամանակին գրել ե „Պրոլետարական հեղափոխութիւնը կհաղթանակի, յեթե նա պաշտպանութիւն գտնի գյուղացիական պատերազմի յերկրորդ հրատարակութիւնից":

Ցարիզմի և կալվածատերերի հետ միասին Մուշանիկ Կուրդինյանը իր հարվածները ուղղել ե նաև խոշոր բուրժուաչիայի դեմ: Բուրժուաչիայի դեմ ուղղված վոտանավոր-

ների սեզ անենակարևոր տեղը բռնուսե նրա մի նշանավոր վո-  
տանավորը "Հանգստեք ջահերը" վերնագրով: Այդ վոտանավո-  
րը իր թափով հիշեցնում է մի կողմից վ. Հյուզոյի նշանավոր  
"վողորմած յեղեք" վոտանավորը, վորը թարգմանել է Ալեք-  
սանդր Շատուրյանը, մյուս կողմից Ադա Նեպրին, վորի գեղե-  
ցիկ թարգմանությունը, ինչպես գիտեք, տվել է Հակոբ Հակոբ-  
յանը:

» Բեկ թող, շարեշար, արնոտ ուշաքաղ,  
Հոչոտված մարդկանց սեղ ուրվականներ,  
Խոնավ փոսերում թաղած շող դագաղ  
Ձեզ այցի յեղեն տեսուքով մահարիք,  
Ձեզ հետ տոն տոնեն և վարձանան  
Այլամուգակ կյանքի վայրագ քրքիջով,  
Յերգեն արկանքի յերգը հոգեկան,  
Զոր հացի յերգը մահվան սյունջով  
Յեկ խավարի սեզ, խավար գործերնիդ,  
Պատմեն արգասիք թշվառ անցքերի,  
Ու հանեն ահեղ դղորդ ու շուհը  
Անարդարության սեկ կապանքների,  
Հանգստեք ջահերը:

Պետք է նկատել, վոր Շուշանիկ Կուրղինյանի այս և թե մի  
բանի այլ վոտանավորները 1905 թվի հեղափոխության ժա-  
մանս, արտասանվում ենին բեմերից և ուժեղ տպավորութուն  
գործում, կատարելով վորոշ քաղաքական ազիտացիոն դեր:  
Շուշանիկ Կուրղինյանի բանաստեղծութունների սեզ հատ-  
կապես պետք է ուշադրութուն դարձնենք հետևյալ յերկու  
վոտանավորներին. Եռագինը "Յես ըսբոստացա", վորի սեզ նա առ-  
կա է առաջավոր բանվորների ընդվզումը ցարիզմի և բուր-  
ժուապիայի դեմ: Նա իշխանութունը խավարի հետ է հասնեմատում

այս իշխանութիւնը տապալվում է արատութիւն կամ լույս բերելու համար:

» Յն ըստուայա, լույսը սիրեցի  
Յն ինչպիսիք հարվածներէս տակ  
Իւր վարձ ընկալ... յն... յն հաղթեցի,  
Քանք ու պատիվ ինձ, կեցցե հաղթանակ!:

Իհարկէ « Յն » ասելով հեղինակը սխալն իրեն չի հասկանում, այլ ինչպէս Մայակովսկին է ասում « Հարվածող դասակարգին » վորի շարժումների հանդեպ պարիպը պնդում է: Յերկրորդ վտանավորը, վորը կրում է « կալանավորի յերգ » վերնագիրը՝ շատ կարևոր է սի համեմատութեան համար վորը պետք է անենք Գամառ Բաթիպայի վտանավորներից մեկի հետ: Գամառ Բաթիպան իր « Գուժանի յերգ »-ի մեջ գուժանը վերցրում է պենք դարձնելու նպատակով, իսկ Մուշանիկ Կուրդիւնյանը « կալանավորի յերգ »-ի մեջ շղթան ուղարկում է գործնոց՝ գուժան կռելու համար:

» Չեց վոր ապրում եք խաւարի գերի,  
Յն իմ ուղիով բողբէ եմ նշան,  
Բապում ողակննո իմ շղթաների,  
Վոր վերջելիս ծաղկեցին շուշան?:

Մուշանիկ Կուրդիւնյանի հասարակական, քաղաքական աշխարհայացքի մեջ հիմնականն այն է, վոր նա գիտակցում է դասակարգային կռիւն անհրաժեշտութիւնը: Ան իր վերեւ հիշում « Բանվորները » վտանավորի մեջ, իրար հանդեպ կանգնեցնում է բուրժուապիային և պրոլետարիատին, շեշտելով կռիւլի շահերի հակադրութիւնը, թայց օտ դերը բավական չէ նա պնդում է, վոր կռիւլով, դասակարգային գիտակցութեան շնորհով Բանվորութիւնը պետք է տապալի « սոցալդեմոկրատներին », կուլտուրայի վարճապետն ինչպիսիքներին:

Թե Հակոբ Հակոբյանի և թե Շուշանի Կուրդիյանի ստեղծագործությունները կարծիք յե իբրև ապացույց ծառայեցնել հոր-  
 քելու համար Պոկրոպսկու և նրա դպրոցի սխալները՝ 1905 թ. Կ  
 հեղափոխության վերաբերյալ: Այն յերկու հայ հեղինակների ստեղ-  
 ծագործությունները ցույց են տալիս, վոր հեղափոխության մեջ  
 բանվորությունը հանդես ե գալիս իբրև մի գիտակից դասակարգ,  
 վորը հետևիվողականորեն կռիվ էր մղում՝ ցարիզմը տապալել  
 ևով հանրապետություն հիմնելու, հողը գյուղացուն վերա-  
 դարձնելու, կալվածատիրությունը վոչնչացնելու և բայց այդ-  
 ութ ժամյա բանվորական աշխատանք անցկացնելու ուղղու-  
 թյամբ: Մինչդեռ Պոկրոպսկին պնդում է, առհիսն կերպով,  
 վոր 1905 թ. Կ հեղափոխության ժամանակ ռուս բանվորը  
 գիտակից հեղափոխական չէր, այլ սարերային /Столкновения/:

Յեզ դրանից հետո Պոկրոպսկին թերագնահատում էր նաև  
 այդ հեղափոխության մեջ գյուղացիության կատարած դերը,  
 վորը հեղափոխությունը պատկերացնելով վորպես յերկու-  
 տեսակ կապիտալիզմների /արևմտաեվրոպականների և արդյունաբե-  
 տողների/ պայքար: Մինչդեռ շենիսի համար հեղափոխու-  
 թյան պրոբլեմը իշխանության գրավման խնդիրն էր, Պոկ-  
 րոպսկին պնդում է, վոր այդ հեղափոխության համանակ  
 հիմնականը, տնտեսական պրոցեսը գլխավորելու հարցն է:  
 Այսպիսով մենք տեսնում ենք, վոր գեղարվեստական գրա-  
 կանության միջոցով յերբ գեղարվեստագետը բանեցնում է  
 ռեալիստական մեթոդը՝ իրականությունը շատ անգամ ավել  
 լի ճիշտ ե արտացոլվում, քան թե մի շարք գիտնական-  
 ների յերկերում, գիտնականներ, վորոնք պանգնած են սխալ  
 դիրքերի վրա: Ահա այս հանգամանքը նկատի առնելով հայ-  
 վազի մասին մարքսիզմի կլասիկները առում են, վոր Բրու-  
 սիական պատմությունը նրա յերկերում ավելի ճիշտ է

արտահայտված, քան պատմութեան վորոշ գրքերում,

Շուշանիկ Կուրղինյանի ստեղծագործութեան մեջ հիմնական տեղը բռնում է նաև նրա ժողովրդայնութիւնը: Բանաստեղծուհու ժողովրդայնութիւնն ասենից շատ յերևում է վաթանին նկրված յերգերում, վորոնց մեջ նա հետևում է վոչ միայն մեր ժողովրդական յերգի պոետիկային, այլև մեծ շափով ոգտագործում է բարբառը: Այդ կողմից շատ հետաքրքրական է նրա «Բլբուլին» վերնագրով վոտանավորը, վորտեղ նա ժողովրդական բանաստեղծութեանը հետեւելով, Բլբուլին սիրո յերգիչ է համարում ասելով հետևյալը:

» Արի Բլբուլ մեկ տեղ նստենք,  
Չեն ձենի տանք ու յերգենք,  
Յերգենք ախպեր, ցավը յերգենք  
Դու քո մեռած ալ վարդին,  
Յես իմ ալեր վաթանին»:

Ինչպես մեր ժողովրդական յերգերի մեջ, մեր ժողովրդական բանաստեղծութիւնների և ստեղծագործութիւնների մեջ, այնպես ել Շուշանիկ Կուրղինյանի բանաստեղծութիւնների մեջ կարևոր տեղ է բռնում նաև պանդխտութեան յերևույթը: Պանդխտութեան յերգերի մեջ հատուկ տեղ է բռնում հայրենիքի կարոտը: Մենք տեսանք, վոր Շուշանիկ Կուրղինյանը թողնելով իր հայրենի լենինականը, գնում է դեպի հյուսիս՝ Ռոստով: Նա գրում է, վոր «Դարդերի ծովը ինձ քշել է հյուսիս և ահա այժմ նա կարոտում է հայրենիքը»: Հայրենիքի կարոտը նա շատ ուժեղ կերպով արտահայտել է «Չկա Ալագյալ» վոտանավորի մեջ: Կարոտելով իր հայրենիքը նա պնդում է, վոր ոտարութեան մեջ այդ կարոտը նրան հանգիստ չի տալիս և այս գաղափարը նա արտահայտել է «Յերազներիս ցուլը մարում է» քրապով:

Ինչպես մեր ժողովրդական յերգերի մեջ, այնպես էլ Աուզանիկ  
 կուրդիւնյանի ստեղծագործութեան մեջ «Կուռնկը» հանգեսն է գալիս  
 իբրև հասքավաքեր, վորը կապ է պահպանում բանաստեղծի և իր  
 վաթաւի միջև: Բանաստեղծուհին դիմում է կուռնկին և նրա  
 միջոցով ուզում է խաբար իմանալ: Կարոտի այս յերգը նա կա-  
 պում է աշնան հետ և նրա վոտանավորներէից մեկն էլ հենց  
 այս վերնագիրն ունի. «Աշնան յերգ», վորի մեջ նա խնդրում է  
 կուռնկին հայրենիքից տեղեկութիւն բերել: Բայց ինչքան էլ  
 վոր նա կարոտով է հայրենիքը հիշում, պետք է նկատել, վոր  
 նա մոլեղանդ պագամու չէ և 100%-ով չի սիրահարված իր  
 հայրենիքի վրա: Սա, ընդ հակառակը քննադատական մտտե-  
 ցում ունի դեպի հայրենիքում տիրող պայմանները: Իր վա-  
 թանը նա անվանում է թշվառ ժողովուրդ, դժգոհում է,  
 վոր այդ ժողովրդի մի վորոշ մասը տգետ է, խաւար, նախա-  
 պաշարված և ինչպես բանաստեղծուհին է ասում «Գետի  
 խաչի և մասունքի»: Սույնիսկ հայրենի բնութիւնն ամեն ան-  
 գամ նրան հանգեսն չի գալիս զվարթագին կուրրիտով: Որինակ  
 մթնշաղը նրա աչքին յերևում է «Ծաւակեց, սեղ ու մթին»:  
 Ինչո՞ տիտուր մտքերը բանաստեղծուհին հայտնում է «Ար գի-  
 շեր» վոտանավորի մեջ:

Ընդ համուր պատկերը թե գյուղի և թե քաղաքի բանա-  
 ստեղծուհին դժգոյն և մռայլ գոյններով է տվել: Ամենից  
 առաջ հողը, վորի վրա բնակվում է գյուղացիութիւնը  
 տնօրէն է պալի տակ: Սույնպես և բանվորութիւնը՝ դժգոհ  
 է իր վիճակից:—

«Տնօրէն է հողը, շնչով մահահոտ  
 վիշտն է գալարվում յերկրի յերեսին,  
 Որի թեւերին կսկծի պալոտ,  
 Արմունց է հնչում»

Բայց և այնպես բանաստեղծու հու մտտ այդ մտայլությունը վերջ  
թե հուսա հատկանում, այլ պայքարի յեռանդ է հրա հրում:  
Յեզ նա հավատում է լավագույն պպագային և պրոլետարիատի հաղ-  
թանակին:

« Ղողանջում են պանգակները,  
Ղողանջում են ամեն որ,  
Տառապանքի կսկիծներից  
Յերգեր հյուսում ա հավոր.  
Տանջված յերկրի պաշտո կրճից  
Ղաթոստ կոչն ուժգին  
Տարածվում է ամեն իստիում  
Ահեղ թափով ամենքին »:

### III

Ինչ գեղարվեստական արժեք ունի Շուշանիկ Կուրդինյանի  
պտեղ ծագործությունը: Ամենից առաջ պետք է նկատել, վոր Շու-  
շանիկ Կուրդինյանը կարողանում է իր յերգերին սուղ վերին աւ-  
տիճանի անձնական բնույթ. անձնական այն իմաստով, վոր  
լուբուբու ապման հետ միասին նա կարողանում է պահել կանա-  
չիական նուրբ զգայնություն: Բեղինակին մի շատ կարևոր մտք  
է արտահայտել. նա ասում է՝ « Յեթե հեղինակը գաղափարը  
չի անցկացնում սեփական բնույթի միջոցով, դա մնում է իբ-  
րեզ կապիտալ »:

« Ինձ մի սիրիր » վոտանավորի մեջ Շուշանիկ Կուրդինյանը  
դրել և կարելի յե ասել լուծել է կանանց հարցն այն իմաստով,  
վոր նա պահանջում է, սերերի մեջ հավասարության գաղափա-  
րի իրագործում: Նա պահանջում է, վոր կինը լինի վերջ թե  
սոսկ հանույթի առարկա, տղամարդու զբաղի միայն մարմնա-  
կան առանձնահատկություններով, ծառայի իբրեզ կի՞ վարժանքով:

Միջոց այլ վոր կինը լինի ազատ և անկախ արարած:

Բանաստեղծու հու ասածը վերաբերվում է վոր միայն իր սիրածին և նրա վերաբերմունքին, այլև այն բանաստեղծներին, վորոնք կնոջը յերգում են միայն սուսկ արտաքուստ, նրան դիտում են վորպես սիրո առարկա և վոր վորպես հոգեբանական արժեքավոր անհատականություն: Այդ բանաստեղծները չեն նկատում կնոջ ներքին առանձնահատկությունները, այլ սուսկ նրա արտաքին հրապուրիչ գեղեցկությունը: Կնոջ գեղեցկությունը յերգելով՝ նրանք թեն կնոջը շատ են փառաբանում, բայց իրոք նրան ստորացնում են: Յեթե կինը դիտվում է իբրև ժամանցի առարկա, սա արդեն նրա համար ստրուկոս ուղի յե: Կնոջ անհատականությունը մեծարել են թե մեր ժողովուրդը և թե մեր ժողովրդական բանաստեղծներից շատերը, որինակ՝ Սայաթ-Նովան:

Կիրպատինի կարծիքով Սայաթ-Նովայի ստեղծագործության արժեքն այն է, վոր նա «Յերգում է վոր միայն այն, ինչ սիրում է, այլև ընդունում է իր սիրած կնոջ ինքնուրույն գոյությունը և պատրաստ է ցանկանալ նրան, իր բախտից անկախ յերջանկություն»: Ահա այսպիսի բարձր և մարդավայել սիրո տեսչանք ունի նաև բանաստեղծուհի Մուշանիկ Կուրդինյանը: Հենց այդ պատճառով նա իր սիրածին դիտում է ասելով՝ «Կնոջ անկախ, խոստում արձակ», «Կրծքի սեր» վոտանավորի մեջ, բանաստեղծը ցավում է, վոր կինը թռչել չգիտե: Ինչին վործադրում է Մուշանիկ Կուրդինյանը՝ Գյոթեն կնոջը մեծարել է հենց այդ հատկությունների համար: Գերմանացի հանձարեղ բանաստեղծին հավերժ կանաչիականը (Ewig-weibliche) պատկերանում է իբրև պրոգրեսիվ սկզբունք: Սիրո և կնոջ բարձր ըմբռնումը միշտ էլ հատուկ է յեղել Գյոթեյին, վորը սկզբունքով մեծարել է կնոջը, վերջինիս մեջ բարերար

ուժ տեսնելով և խոնարհվելով նրա առաջ: Հակահեղափոխական բուրժուապիան Գյոթեյի այդ տեսակետին հակադրեց Ոստո վայնինգերի փիլիսոփայությունը, վորը կանաչիությունը և հետադիմությունը հասարուժ է սիանման յերևույթներ:

«Արծյի սեր» վոտանավորի մեջ Շուշանիկ Կուրդիսյանը հետեվելով Մաքսիմ Գորկուն, տալիս է թուշունի և սողունի հակադրությունը: Այդ հակադրության նպատակն այն է, վոր ցույց տա, թե ինչպես բնության մեջ, այնպես ել մարդկության մեջ ճահից բարձրանալը հոգու վեհության և անմահության նշան է: Հակոբ Հակոբյանի պես Շուշանիկ Կուրդիսյանը ևս բնությունը և մարդը հասարուժ է դաշնակիցներ որիննայ՝ բնության անդորրը սփոփուժ է բանաստեղծու հու անհանգիստ մտքերը:

Շուշանիկ Կուրդիսյանի ստեղծագործության առանձնահատկությունն այն է, վոր նրա նույնիսկ քաղաքայիական յերգերը ներկված են սուբյեկտիվորեն զեղուն տրամադրություններով: Ժողովրդական պոեզիայի ազդեցությունը և լեզվի եմպիրիայի ու մեղադրիկ տարրերը առաջ քաշելով նա ձգտուժ է արտահայտել իր սուբյեկտիվիզմը և զգայնությունը: Այնուհետև պետք է նկատել նաև այն, վոր բանաստեղծու հու վոտանավորի ձևը վերին աստիճանի պարզ է, թափանցիկ և սրա հետ սիասին բովանդակալից: Ռա այն դեվարին պարզությունն է, վորը հեշտությամբ չի ձեռք բերվուժ: Յեզ դրա հետեվ թագնված է յերկարատեվ ուշադիր ջանասիրություն, խոսքի վրա համառ աշխատանք: Մի խոսքով՝ լեզվական, աչքի ընկնող կուլտուրա: Այդ իմաստով նա շարունակուժ է Հակոբ Հակոբյանի և Ավետիք իսահակյանի տրադիցիան որգանապես ընդունելով նրանց նվաճուժները և վոչ թե մնալով առակ նմանվող: Նա նմանվող չէ, վորով հետեվ գրուժ է ինքնակենսագրական շատ տարրեր մտցնելով իր ստեղծա-

գործութեան մեջ, խորապէս ապրելով իբր արտահայտած մտքերը  
և զգացմունքները, իբր հասարակ հարեցողութեանը միացնելով  
բունն անկեղծութիւնը: Այդ բոլորն իբր ժամանակին գնահատել  
են վոչ միայն գրականագետները, քննադատները, այլև ըն-  
թերցող հոծ մասսան, Շուշանիկ Կուրղինյանին բեմերից  
արտասանող յերիտասարդութիւնը:

Շուշանիկ Կուրղինյանն ամենից սուաջ ինքն զգում է  
իբր բանաստեղծութիւնների թարմ բովանդակութիւնը, «Կհյու-  
սեմ յերգեր» վոտանավորի մեջ նա պնդում է, վոր ինքը նոր հիւն  
է յերգում: Ինչ նպատակ ունի այդ հիւնը, ինչ նպատակով  
է այդ մտքերը արձարծում, ո՞ր է տանում, ո՞ւմն է կոչ անում:  
Այդ բոլոր հարցերին պատասխանում է բանաստեղծն ասելով.  
Թե յերգում է հազասարութեան հիւնը:

«Հազասարներ»-այդ հասարակ բառով նա ասես թե պնդում է  
յարական հասարակայնութեանը, վորը հիմնականում անհա-  
վասարութեան իրավունքի վրա յեր կառուցված: Հազասարու-  
թեան սկզբունք առաջադրելով բանաստեղծուհին հազատա-  
յած է, վոր այդ սկզբունքը կարելի յի իրականացնել միայն  
պայքարի միջոցով: Յեւ նա գտնում է, վոր այդ պայքարի  
ժամանակն արդեն վրաս յի հասել և յուր յերգերում խոսում  
է «Յերկունքի, ըմբոստացումն» վայրկյանի մասին: Այս «Պայքար»  
հեղափոխութիւնն են, ապստամբութիւնը, վորից բանաստեղ-  
ծուհին շի ուզում փախչել, նա շի ուզում պահպնել, նա շի  
վորոնում հանգստութեան վայր, այլ կռիվն է համարում.  
Իբր վոլորտը և նա բացականչում է «Տար ինձ մեծ հի-  
սանք», վորով հետև անթարթը պատասխանատու յե, մի  
հարված ևս և անա կիշրվի զարիզը: Շուշանիկ Կուր-  
ղինյանի յերգերի այս գիպը իբր թափով և յերածշտակա-  
նութեամբ հիշեցնում է Հակոբ Հակոբյանի պոեզիան:

Այդ ցիկլը Շուշանիկ Կուրղինյանը վերջացնում է մի ներբողով՝ «Փառք ի քարծուես»:

Գրականության տեսաբաններից վոմանք, որինսակ Անիմա կին պնդել են, թե բանաստեղծներն այնպես են ներկայացնում իրենց զգացմունքները, ինչպես դերասանը բեմի վրա. այլ խոսքով նրանք խաբում են: Այդ տեսությունը կարելի չէ հերքել հենց Շուշանիկ Կուրղինյանի որինակով, վորը «Դերասանություն» շիանում, այլ խորացես ապրում է իր զգայածը:

Մենք արդեն գիտենք, վոր Շուշանիկ Կուրղինյանի մոտ գրական արժեքի տեսանկյունով շատ կարեվոր է նրա վոտանավորների յերաժշտականությունը: Մենք արդեն շեշտել և հիշատակել ենք նրա «Տրտունջ» վոտանավորի նվագային լինելը / «Իմ մրմուռ միշտ անլուռ ցավերգով», պետք է հիշատակել նաև «Աշուն» վոտանավորը / «Կանանչ ծառի ծիր ծիծառի»/ շատ նվագային է նաև «Յերջանիկ» վոտանավորը: Բերենք այդ վոտանավորից մի հատված:

«Գիշերն իջավ, ճամփա ընկավ,

մայր լուսին:

Մի անտարբեր, անհոգ ծպիտ

յերեսին:

Սմայիկները նրա ճամփին

բոլորած,

Ջետ- հետ փախան, կասես լույսից

մոլորված»:

Շուշանիկ Կուրղինյանի տաղաշափության առանձնա հատկություններից մեկն էլ այն է, վոր նա տողերի տրոփպիոն հաջորդականությունը փոխում է, տողը կիսում է, ներշնչելով ընթերցողին, թե ինչպես պետք է կարգալ, ինչ ինտոնացիայով, ինչ պաուզաներով և այլն: Բերենք

մի որինակ:

„ Մենք՝ բանվորներս, վշտի, արցունքի,  
կիսաբազկ կյանքի, բանտի, ախորի-  
անբաժան ընկեր...

Մենք՝ բանվորներս, ապրելու, ահիւյ,  
կյանքի շուքայում ստոր փաճառքի-  
նձան ծախվածներ!”

Ի պատիւ Շուշանի Կուրդինյանի, պետք է ասենք, Վոր  
ու շատ մեծ ուշադրութիւնն է դարձրել Վոտանավորի հըն-  
շողութեանը, ու զարձնելով, Վոր հանգեցը միայն գրաքիկ  
նմանութիւն շունենան, այլ համա հնշեղ լինեն: Այդ բո-  
լորով հանդերձ նրա յերաժշտականութիւնը չի տուժում,  
նրա յերաժշտականութիւնի չի տուժում բանաստեղծութեան  
ներքին բովանդակութիւնը: Հետաքրքրական է նկատել, Վոր  
Մաքսիմ Գորկին այն հանգահյուսներին, Վոր այդպես են վար-  
վում, այսինքն, Վոր բովանդակութիւնը զոհում են հնշեղու-  
թեանը անվանում է „Գորտային բանաստեղծներ“, կամ գորտային  
բանաստեղծութիւններ:

Տաղաչափութեան հակառակորդները համարում են դա հնա-  
ցած մի ձև, պոպուլուսներն արտահայտելու համար: Դնացած  
ինչպես պրահը, հնացած ինչպես պարիկը, Վորոնք մի ժամա-  
նակ „ ժամանակակից են յեղել“, բայց այժմ միայն բեմի վրա կա-  
րելի յե տեսնել, կամ տպավորիչ է միայն բեմից: Այդ տեսա-  
կետը սխալ է, նախ հոգեբանական տեսակետով տաղաչա-  
փութեանը հիսք ունի, որինակ՝ հուլիված մարդը շախական  
ձև է տալիս իր խոսքին: Կուլտուրայի պատմութիւնից հայտ-  
նի յե, Վոր տաղաչափական խոսքն ավելի հնագույն է քան  
պրոպան, կան ապացուցողներ, Վոր վայրենիները, ինչպես և  
յերեխաները, հաճախ իրենց հուլիված վիճակն արտահայ-

տու՛մ են, դրան տալով շափածո՞ ճև: Բայի այդ հոգեբանական  
հիմքից, տաղաչափությունը գրականության համար անհրա-  
ձեշտ է: Երբտ է, սովորական խոսքի մեջ էլ ռիթմ կախու-  
ղես և սովորական յերբի մեջ, բայց կանոնավոր զորքի և  
անկանոն յերթեկության համեմատությունը հենց զույգ  
է տալիս, վոր յերկուսի մեջ էլ խոշոր տարբերություն  
կա: Սույնպիսի տարբերություն կա նաև շմշակված, հում-  
եի, սովորական շափածոյի և տաղաչափության միջև: Շատ  
երբտ է նկատված, վոր հնդուկը անոթի մեջ հարկավ ծնչվում  
է, բայց դա անհրաձեշտություն է այն պահելու համար:

Մայակովսկին իր տաղաչափության մի հատկությունը ևս  
դեկլարացում է ընթերցողին: Նա տողը բառերի բաժանելով  
ներշնչում է իր ընթերցողին, թե՛ հնչյուն պետք է կարդալ,  
ինչ ինտոնացիայով, ինչ պաուզաներով: Բայց ի հարկե, այս  
բոլորն ասելով, մենք չենք գերազնահատում տաղաչափու-  
թյան նշանակությունը:

Վերջի վերջո մի բան երբտ է, և նաև ստուգված ճշմար-  
տություն, թե՛ հնչյուն վոր սարը, հսկա աշտարակը ազդում է  
անտրջապես, այնպես էլ բանաստեղծությունը պետք է ապրի  
իր ներքին և արտաքին հատկությունների զուգահեյությունով,  
և վոր թե միայն հանգերով: Նախ պետք է լինի մտքերի  
յերածշտականություն և ապա դրան կից և դրանից բխող  
չափական յերածշտություն: Յերբեք չպետք է մոռանալ մի  
հանգամանք ևս. ամենազգ: Վտանավորը, յեթե արձակ խոսքի  
վերածենք, արձակով արտահայտենք, ամբողջ թովչությունը  
կկորցնի: Ինչն է դրա պատճառը: Պատճառը ռիթմն է, վորը  
այս կամ այն տրամադրությունն է հաղորդում:

Շուշանիկ Կուրդիչյանի բանաստեղծությունը, չնայած  
որ թարմ բովանդակությամբ, ունի հին նկերից մնացած մի

քանի հատկութիւններ. որինակ՝ նրա պատկերների և նմանութիւն-  
ների մեջ կան մի շարք միստիկական, կրօնական շեշտեր,  
Մարտիկի շիրիւք նա ուխտատեղի յետ համարում: Ասում է՝  
«Սուրբ ապատութիւն», դեպի Գողգոթա «Տիրոջ սուրբ գահը»,  
բայի դրանից նրա լեզվի մեջ կան գրաբանի վորոշ հետքեր:  
Գործ է ածում «բազում անկի», «Փառք ի բարձունս» և այլ  
բառեր ու արտահայտութիւններ:

#### IV

Դնելով Շուշանիկ Կուրղինյանի կրած գրական ազդեցու-  
թիւնների խնդիրը պետք է նկատել, վոր մեր բանաստեղծու-  
հին, իր բոլոր ինքնուրույնութեամբ հանդերձ, սովորել է ամենից  
առաջ մեր ժողովրդից, մեր ժողովրդական բանաստեղծութիւ-  
նից, վորը նա հաջողութեամբ ոգտագործել է:

Շուշանիկ Կուրղինյանը ժողովրդական բառ ու բանը  
ոգտագործել է իր անձնականութիւնն արտահայտելու համար:  
Պետք է նկատել, վոր անձնականութիւնն այն շահով է արժեքավոր,  
վորքանով հեղինակը լիքն է կյանքով և հանրոգոտ կրքերով և  
նույն այդ անձնականութիւնն այն շահով է վատ և մերժելի, վոր-  
քանով վոր բանաստեղծը մեկուսացած է կյանքից և պայքարից:  
Շուշանիկ Կուրղինյանն իր լավագոյն յերգերի մեջ այդ յերկու-  
իմաստով անխոցելի յետ: Մա չի փախչում կյանքից և նրա ստեղ-  
ծագործութեան մեջ կռվի ապրումները անկեղծորեն են գրված:  
Շուշանիկ Կուրղինյանի ստեղծագործութիւնը տողորված է  
ժողովրդայնութեամբ: Նրա պատկերավորութեան վրա իշխում է  
ժողովրդական բառ ու բանի շունչը: Բանաստեղծուհու թե-  
լիրիկան և թե պոետիկան շոշափելի կերպով հարմարեցված  
են ժողովրդական մտայնութեանը, զգալակերպին և բարոյական  
վարք ու բարքի աստիճանին: Այդ առումով առաջին հերթին

Նրա ստեղծագործության մեջ պանդխտական յերգերի տրագիկա-  
ները աչքի յեն զարնվում: Որինակ՝ Կուռնկը իբրև պանդխտ  
պվեստաբեր: Այնու հետեվ սիրո յերգերի մեջ վորոշ շափով իշխում  
է ժողովրդական նշանավոր վարդ ու բլբուլի փոխ հարաբերու-  
թյունը: Սիրո յերգերի վոճի մեջ ևս նա ոգտագործում է ժող-  
վորդական բառն ու բանը: Որինակ՝ «Սիրուն տեսից պարնվել»  
«Յնս ու նա» վերնագիրը կրող բանաստեղծության մեջ նա մի  
այսպիսի համեմատություն է անում՝ սիրածը իբրև մի չինա-  
րի, ինքը մի ճանապարհորդ նրա ստվերում: Անքուն գիշերվա  
պատկեր, - քամին ուզում է հեքիաթ ասել, վոր չ'ընենք: Հետո  
շատ կարեվոր է նկատել նաև ժողովրդական մտայնությունը  
և բարոյական հայացքն արտահայտող մի քանի պատկերներ  
և նմանություններ: Որինակ՝ փուշ աշխարհը բովանդակու-  
թյուն է ստանում, յերբ դարդաֆաշ մարդիկ միանում են:  
Յերկրի փոշին արեվի հանդեպ կարմրում է ամոթից: Վերջա-  
պես, պետք է նկատել, վոր Շուշանիկ Կուրդիյանը թշնա-  
մի ասելու փոխարեն, սիրում է ասել դուշման և այլն:

Շուշանիկ Կուրդիյանը բանաստեղծական զգայնության  
հետ միասին ունի նաև պլաստիկական ուժ: Յերբեմն այս-  
յերկու առանձնահատկությունները նրա մոտ միանում են և  
նա տալիս է միաժամանակ և տեսիլք և տրամագրություն:

«Խավար ե, գիշեր, հեռու պեկթուս»:

Աշուղի միջից դաշուկ դեմքերով նիրհում են անքուն

ասուղները տրտում,

Սոսկումով պառտած մարմրում շուշուով:

Տնֆում է հողը, շնչով մահահուս

վիշտն է գալարվում յերկրի յերեսին:

Ողի թեպերին կակճի լացոտ

Մրժունջն է հնչում, շկա և լուսին:

Բայի Ժողովրդական քանաստեղծութիւնից Շուշանի,  
 Կուրդիկեանը ոգտագործել է նաև Ավետիք Իսահակյանի  
 պոեզիան: Առաջին հերթին յերկուստ հասարակական քնարի մտ-  
 նկատելի յե հարուստ և աղքատ, կուշտ հարստութեան և  
 աղքատ ամբոխի հակադրութիւնը, արտաքուստ զայրալի  
 շնչտերով, և հիմնականում կարեկցութիւն, գթաշարժութիւն  
 առաջ բերելու նպատակով: Այդ տրամադրութիւնը բացա-  
 կայում է Հակոբ Հակոբյանի ստեղծագործութեան մեջ, բայց  
 առկա յե Ավետիք Իսահակյանի և Շուշանի Կուրդիկեանի  
 պոեզիայում: Որինակ՝ Շուշանի Կուրդիկեանը գրում է դժ-  
 մելով հարուստներին:

» Յեզ վաստակներս շնչին փշրանքներ  
 Դժգոհ շարտում քաղցած ամբոխիս.  
 Կասես մարդկութեան մենք խորթ զաւակներ-  
 Դուք վայելչութեան, անարդար կյանքի  
 ընտիր ըսքիչներ...

Այս հատվածը հիշեցնում է Ավետիք Իսահակյանի  
 հայտնի տողերը.

» Հարուստ մարդիկ, ուտեն, խմեն  
 Աշխարհի ճոխ սեղանից  
 Մենք աշխարհի խորթ ազերքն ենք,  
 Մեզ փայ չկա աշխարհից-

Պանդխտի և վաթանի յերգերի մեջ ևս Շուշանի Կուրդիկեանը գծում  
 է Ավետիք Իսահակյանի բայ արած ճանապարհով. զուգարդիցում են  
 տրամադրութիւնների հմտ միասին նաև բառապաշարը, արտահայտու-  
 թեան կուրդիտը: Որինակ՝ պանդխտի յերգերից՝ «Քեա Աղաջայ, շէս  
 ճիր մախր»։ Ղարիբ կարտու։- Ղարիբ, ղուրբաթ յերկր ընկա։  
 Բնորդ ծ նաև Շուշանի Կուրդիկեանի հետեւյալ արտահայտութիւնը՝  
 «Քեզ մանթաշ, արտակեց պոեզի»։ Կարևոր նշանակութիւն ունի նաև

յերկու բանաստեղծների սիրո յերգերի նմանութունները: Նախ տեղ  
սինոլոգիան՝ Շուշանիկ Կուրղինյանն ասում է՝ «Յերգեր ել չկան  
վերքեր ել չկան» և սա հիշեցնում է Ավետիք իսահակյանի  
հայտնի աշխտերացիան՝ «Յերգեր և վերքեր»: Շուշանիկ Կուր-  
ղինյանը գրում է՝ «Կտրվեց, մեռավ սիրո յերգի լարը և յես  
կսկծից պարթեցա քնից»: Մենք գիտենք, Վոր Ավետիք իսա-  
հակյանի մոտ սրտի բուր լարերը կտրվել են, բայց սիրո լա-  
րից: Շուշանիկ Կուրղինյանն ոգտագործել է այդ նմանու-  
թյունը ինքնուրույն շեշտ ավելացնելով: Սիրո յերգերի մեջ  
նշանակալից է նաև Քայնեյական փերիների առկայությու-  
նը, Վորը գալիս է Ավետիք իսահակյանի միջոցով դեպի  
հայ գրականութունը: Շուշանիկ Կուրղինյանը գործ է ածում  
հետևյալ բնորոշ արտահայտութունը՝ «Յես իմ սիրտը խնձֆ  
խելառ» կամ «Սուսվել, հուտակ ալիքներում, լինել գետի նայ  
փերի»: Մի այլ դեպքում ասում է՝ «Իմ սիրտ, իմ խեղճ բա-  
լա» և այլն: Այդ բոլորն Ավետիք իսահակյանական այն  
կոչորիտն է, Վորը հետոքի՛ն ոգտագործել է Շուշանիկ Կուր-  
ղինյանը:

Իսկ գեղջուկների մասին խոսելիս, բանաստեղծու հու  
քնարի վրա յերեվում է Հովհաննես Թումանյանի մի-  
ջոցով ժողովրդական բառ ու բանից առկած մշակում-  
ների շունչը: Որինակ՝ «Գեղջուկու հու մորմոքը», Ֆալշին  
ասաց՝ «մեր աստղերն իրար հետ շեն մոտենա... մատնեցին  
մեզ շարքին, գյուղը խոսեց մեր վրա»:

Մյուս կարևոր հեղինակը, Վորին յերախտապարտ է Շու-  
շանիկ Կուրղինյանը՝ սա Հակոբ Հակոբյանն է: Վերջինիս քնարի  
մարտահան շունչը անցել է բանաստեղծու հու գործերի մեջ,  
առաջ բերելով մի շարք հաջողակ յերգեր, Վորոնց Հակոբ-  
յանական կոչորիտը անուրանալի յե: Շուշանիկ Կուրղինյանի

այն խոսքը, թե՛ «Յես թափն եմ սիրում լուկ մի հարվածի»,  
 անպայման վորոշ արձագանք է Հակոբ Հակոբյանի հայտնի  
 տողերի: Ինչպես և Շուշանիկ Կուրղինյանի այն խոսքը,  
 թե՛ «Կտրիչի նման կուրծքդ դեմ տուր դուշմանի թրին» գործ-  
 յալ հիշեցնում է Հակոբյանի հայտնի արտահայտություն-  
 ներից մեկը:

Շուշանիկ Կուրղինյանի «Փառք բանվորության կար-  
 միր դրոշին» դիֆիրամբը առաջին անգամ հնչել է հայ  
 պոեզիայի մարզում Հակոբ Հակոբյանի նախաձեռնությամբ:  
 Մայակովսկին ասում է՝ «Իսկական բանաստեղծը, միշտ,  
 թեկուզ մի ժամով, պետք է վոր կյանքից առաջ ընկնի»:  
 Թե՛ Հակոբ Հակոբյանը և թե՛ Շուշանիկ Կուրղինյանը արտա-  
 հայտում են իրականությունը, վոր միայն տեսնելով այսորը,  
 այլև վաղը, գալիքը, դրա համար նրանք մեծ վստահությամբ  
 խոսում են հեղափոխության մասին՝ կարմիր դրոշի տակ  
 կռվող դասակարգի լավագույն ապագայի մասին, վորը իրա-  
 գործեց պրոլետարիատը սոցիալիստական մեծ հեղափոխու-  
 թյան ժամանակ:

Բանաստեղծուհու քնարի վրա յերեվում են նաև Հակոբ-  
 յանի միջոցով հայ գրականության մեջ մտքրած Ադանեզ-  
 րիական վորոշ խաչեր: Որինակ՝ Ադանեզ գրիական շունչ նկատ-  
 վում է Շուշանիկ Կուրղինյանի «Հանգստե՛ք ջա հերը» բա-  
 նաստեղծության վրա: Մենք գիտենք, վոր Ադանեզը ինչ-  
 իստում է կարեկցության պայմանից առաջացնել «Քաղ-  
 ցած ու թշվառ» բանվորության նկատմամբ: Շուշանիկ  
 Կուրղինյանի մոտ Հակոբյանական ըմբոստացման հետ  
 միասին կա նաև այդ կարեկցության սոցիալիզմը /Mitle-  
 id: Socialismus/, վորը Ադանեզ <sup>գրիական</sup> պոեզիայի մեջ  
 է: Շուշանիկ Կուրղինյանը դիմելով հարուստների ասում  
 է:

« Դուք տոն եք տոնում, խրոխտ թնդացնում  
Ուրախ քրքիչով բարձր պատերը,  
Վորոնց վրայից քաղցած, անխնդուս  
Ընկալ թշվառը, փշր... վոտֆերր... »

Յե՛կ լապտեր - ջահեր շողում են պայծառ  
Ու լույս տարածում ձեր կուշտ դեպքերին.  
Մինչգեռ խիղճերդ կարձր ե՛ ինչպես ժայռ.  
Մշտական խավար՝ սրտերիդ բաժին :  
Հանգստե՛ք ջահերը...

Ինչպես գիտենք, անգանգորի մոտ խիղճ պարթեցնելու  
այս միտումն առկա յե՛: Իհարկե, այս նմանությունը չի վերաց-  
նում այն ակներեկ փաստը, վոր Շուշանիկ Կուրդինյանի վո-  
տանավորն ինքնուրույն ստեղծագործությունն է: « Յերկը, ասում  
ե իբսենը, հեղինակի հոգեկան սեփականությունն է գաղձում,  
յերբ նա իր անհատական ստեղծագործության կնիքը դնում  
ե դրա վրա՞: »

Շուշանիկ Կուրդինյանի հիշված վոտանավորի վրա վոչ  
միայն կա նրա ստեղծագործության կնիքը, այլև հայ քննա-  
դատները այդ յերկը հու տարել են նրա գլուխ գործույր: Վեր-  
ջապես, մենք հիշել ենք բանաստեղծուհու մի պատկերով՝  
հասեմատություն արձվի և սողունի միջև, վորն այս կամ այն  
շափով հիշեցնում ե Մաքսիմ Գորկու <sup>հայտնի</sup> յերգը:

Ավելացնենք դրա վրա և մի այլ նմանություն: Շ. Կուր-  
դինյանի « Դոնի վրա » բանաստեղծությունը հիշեցնում ե  
Մ. Գորկու « Разрушенный мост » հայտնի արձակ բանա-  
ստեղծությունը:

Այժմ անցնենք վերջին բնութիւն, թե ինչ գրական ժառան-  
գությունն ե մնացել Շուշանիկ Կուրդինյանից, վորն ե նրա.

ստեղծագործութեան մեջ մնայունը և այսոր մեր գրական սե-  
րժնի համար դաստիարակչականը:

V.

Այսոր մենք հարգանքով ենք հիշում Մուշանիկ Կուրղինյանի  
հիշատակը, վորովհետեւ նա առաջին կին հեղինակն է, վորը յեր-  
գեց հեղափոխութեանը, վորը յերգեց բանվորի և գյուղացու ընդ-  
վզուածը պարիպի և բուրժուակիայի դեմ և պարսնալիչ շե. վոր  
հայ դեմոկրատական քննադատները, ինչպես քիչ առաջ ասա-  
լիսք, նրա յերգերի մեջ գլուխ գործայ են համարել "Հանդ<sup>յալ</sup>  
ութի ջահերը" վորտանալորը: Նրա մյուս յերգերից հազանել  
են, գովել և տարածել հետեւյալ բանաստեղծութիւնները՝  
"Բլբուլին", "Տրտունջ", "Արծալի սերը", "Գարուն" է, "Առեղծ-  
վածը" և "Արծիվը":

Բեիսսկին ասել է "Անտանելի յե միջակութեանը" վորտանա-  
լորների բնագավառում: Մուշանիկ Կուրղինյանն անպայ-  
ման իր մի բանի գործերի մեջ բարձր է միջակութեանից  
և հանդես է գալիս ինքնատիպ ներշնչումով: Այդ քն-  
քուշ վզապսակների տեր կինը հեղափոխութեան շնորհիւ  
դառնում է ըմբոստ, խիզախ տիրող կարգերի դեմ կռու-  
ն է և բանաստեղծական խոսքը սուր է շինում ժողովրդի  
թշնամիների դեմ: Գեվորգ Ջերվերցը Ենդիանանդ Ֆրեյ-  
լիգրադին գրուստ՝ Ein Schwert in ewiger Hand ist  
das Gedicht:

Սակ Հակոբ Հակոբյանի աշակերտուհու մի բանի բանա-  
ստեղծութիւնները իսկապես, վոր պենք են նրա ձեռքի:

Սայաթ-Նովան, բանաստեղծին ժողովրդի ուսուցիչը կամ  
ատաղ ձագործն է համարում, վոր ծուռ փայտը տաշում է:

Մուշանիկ Կուրղինյանը նման դեր խաղացել է կնոջ ինքնու-

րույնությունը բարձրացնելու գործում:

Քննադատներից վոմանք այն տեսակետն են պաշտպանել, թե գեղագետը մի պայուսն գործիք է, վորի վրա նվագում են բնությունը և հասարակությունը: Սա միակողմանի տեսակետ է: Բանաստեղծը կազմակերպում է նաև բնության և հասարակության ճանաչողությունն ակտիվորեն:

Մեկի համար, վորն ուշուս է գրող լինել՝ Տոլստոյը յերեք պայման պարտադիր է համարում: Առաջին՝ նա պետք է կարողանա մտածել և խոսել վողջ մարդկության համար: Երկրորդ՝ նա պետք է սիրի այն առարկան, վորի մասին խոսում է և յերրորդ՝ նա պետք է կարողանա դա արտահայտել: Այդ վերջին հատկությունը ձեռք է բերվում աշխատանքով և կենսական փորձով:

Իդեական արժեքների հետ միասին պետք է շեշտել նաև Եռանկյ կուրդինյանի յերգերի գեղարվեստական նշանակութունը: Նա այն յերգիչների թվին է պատկանում, վորոնք մեծ նշանակութուն են տալիս վոտանավորի տեխնիկային, տաղաչափական արվեստին և լեզվական կուլտուրային: Առանձնապես պետք է շեշտել Բանաստեղծուհու յերգերի յերաժշտականությունը, վորի լավագույն հատվածները կարող են մրցել մեր գրականության ամենանվագային բանաստեղծների հետ, վորպիսին են՝ Պ. Պեշկոթաշլյանը, Ավետիք Իսահայանը և Վահան Տերյանը:

Զպետք է մոռանալ նաև նրա լեզվի մաքրությունը: Նա հիմնականում գործ է ածում մի սահուն, մշակված և պարզ հայերեն, վորի լավագույն հատվածները անպայման ըրինակելի յեն:


Հաջ գրականության լիբերալ թեմի քաղաքական պոետիան արձակին է մոտենում իր բառական մատերիալով և այլ-

ժողովները: Այսպես է գամառ. քաղաքային պոեզիան, քա  
ղաքային լեզուներն տալիս է շարժման պատմաբան լեզուագիտության:  
Քաղաքային գեղարվեստը. կենդանի պոեզիան: Քաղաքային:  
Պոեզիա է նկատել, վոր Շուշանիկ Կուրդիսյանի մոտ տալիս է  
կենդանի հույսաբանությունը և իշխում: Վորն ստեղծագոր-  
ծությունը պարզեցում է հասկանալի լեզու:

Բայց այդ բոլորի հետ միասին պետք է անկողնորեն մի  
բան երչտ նկատել: Շուշանիկ Կուրդիսյանի վտանագոր-  
ծերը շատ գեղեցիկ, քնքար և զգայուն լին, բայց և այնպես  
մոռանալու չեն, վոր այդ բանաստեղծուհուն և մարդուն տրված  
չեն մեծ կրթություն և ուսուցող կոնֆլիկտներ, վորոնք նշանավոր  
կլասիկների հոգին են կապում: Զեպ սրա համար կրա ստեղ-  
ծագործական ոգաբար տեղական կրակ չ'պահեց ու նա չու-  
տով էլ լռեց:

Շարունակ խոսելով պրոզաներից ստանալիք մտանոր-  
թյան մասին, մենք պետք է խոստովանենք, վոր սա մեղալի  
մի կողմն է: Մենք չ'պետք է մոռանանք այն ճշմարտություն-  
ներ, թե մարդկանց հասկանալի և ռատմանախրելի, ազելի դժվար  
է. քան գրքերի և հոգվածների ուսումնասիրությունը: Տաղանդը  
աշխատանք է, ասում է Մաքսիմ Գորկին՝ հակադրվելով կամ  
գուցե ամփոփելով բոլոր վորակումները, վոր ասված է լեզու  
մինչ այդ տաղանդի վերաբերյալ ուրիշների կողմից: Որինակ  
տաղանդը հասկերություն է / Բայլյակ /, տաղանդն՝ ուշադրու-  
թյուն է / Գյոթեն /, տաղանդը մտքի հարատև, կենտրոնացումն  
է մի առարկայի վրա / Ջեյմս Կոլլի / և այլն: Տաղանդավոր հե-  
ղինակին այսպես է բնորոշում Գոգոլը՝ «Միայն նա, ով ազելի  
չատ, ազելի խորն է իմանում իր առարկան, ով մի նոր բան  
ունի ասելու, նա կարող է լինել գրող: Այս պատճառով պետք  
է ունենալ զգայունություն և փորձառություն առարկային»:

Ֆրիդրիխ Չեքեւը իր մասին գրել է՝ « Գերմանիան աչ-  
տարակույս ունեցել է ինձանից ավելի մեծ բանաստեղծներ,  
բայց մի կետում յես նման եմ իմ մեծ նախորդներին. յես  
ևս սրբազան լրջությամբ եմ գործադրում արվեստը»: Յեվ-  
րոպական գրողներից մեկը՝ գրելուց առաջ հագնում եր իր  
տոնական զգեստը, անպայման նման տրամադրութեամբ է  
յեղել համակված նաև Շուշանիկ Կուրդիւնյանը գրելուց  
առաջ: Նա, ի հարկե, այն հեղինակներից չէ, վոր նոր յերկ-  
րագունդ են գտնում, բայց և այնպես հայ գրականութեան  
պատմութեան մեջ նա իր համար նվաճել է վորոշ ամուր  
տեղ:



ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0075913

A  $\frac{\text{III}}{5603}$